ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«29» սեպտեմբերի 2017 թվականի № 119-Ա

ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 28-րդ հոդվածով, 29-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով <ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ> ՓԲ ընկերության ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի Շեն տեղամասի ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման մասին (ՇԱԹՎ 29/030) <ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ> ՓԲ ընկերության 2013թ նոյեմբերի 8-ի թիվ 366 պայմանագիրը, 2017թ-ի հուլիսի 21-ի թիվ 21/07 դիմումը, հրապարակային սակարկություններին մասնակցելու մասին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 2017թ.օգոստոսի 14-ի համաձայնությունը, 2017 օգոստոսի 18-ին կայացած աճուրդի արձանագրությունը և ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

Հրամայում եմ

1. Ընդունել ի գիտություն, որ <ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ> ՓԲ ընկերությանը պատկանող ընդերքօգտագործման /ՇԱԹՎ-29/030, ՊՎ-030, ԼՎ-030/ իրավունքը հրապարակային սակարկության միջոցով օտարվել է <ԳՈԼԴ ԼԱՅՄ> ՓԲ ընկերությանը:

2. Աշխատակազմի Ընդերքի գործակալության պետին՝

1) Հաշվի առնելով սույն հրամանի 1-ին կետը, դադարեցնել <ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ> ՓԲ ընկերության << ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի Շեն>> տեղամասի նկատմամբ ունեցած ընդերքօգտագործման իրավունքը:

2) << ՀՀ Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի Շեն>> տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը /ՇԱԹՎ-29/030, ՊՎ-030, ԼՎ-030/ տրամադրել <ԳՈԼԴ ԼԱՅՄ> ՓԲ ընկերությանը կատարելով համապատասխան փոփոխություններ նշված օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում:

3) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ